«Շուտով սեպտեմբերն է» ամառային դպրոցի ծրագիրը կնախապատրաստի երեխային ակադեմիական գալիք սեպտեմբերի առօրյային: Ծամբարը նախատեսված է 5-6 տարեկան երեխաների համար, ովքեր 2026, սեպտեմբերին կգնան 1–ին դասարան:

Մեկնարկը հունիսի 3-ից, օրերը այս պահին հստակեցման փուլում են:

Երկուշաբթի-ուրբաթ 10:00-13:00 կամ 10:00-14:00:

10–օրյա ճամբարի արժեքը՝

**30 000 ՀՀԴ, 10:00-13:00,** առանց ճաշ, արշավներ

**50 000 ՀՀԴ՝ 10:00-14:00,** ներառված է նաև ճաշ, արշավներ, հանգստի ժամ

Ծրագիրը ներառում է՝

1.Տրամաբանության և մտքի մարզում
Երեխան կսովորի համեմատել առարկաները, գտնել օրինաչափություններ և լուծել պարզ խնդիրները խաղերի միջոցով:

2. Կողմնորոշում տարածության մեջ
Խաղերի օգնությամբ երեխան կսկսի վստահ տարբերել «աջն ու ձախը», «առաջն ու հետը» և ճիշտ ընկալել առարկաների դիրքը:

3. Նախապատրաստում ընթերցանությանը
Մենք կզարգացնենք երեխայի լսողությունը, որպեսզի նա հեշտությամբ տարբերի հնչյունները, ճանաչի տառերը և սիրի գրքերի աշխարհը:

4. Ձեռքի մարզում և գրելու հմտություններ
Նկարչության և հատուկ վարժությունների միջոցով կպատրաստենք երեխայի ձեռքի մատները, որպեսզի դպրոցում գրիչ բռնելն ու գրելը լինեն հեշտ և անցավ:

5. Երևակայության և ստեղծագործական ազատություն:
Երեխան կսովորի ինքնուրույն հորինել պատմություններ, կառուցել պատկերներ և չվախենալ սեփական մտքերն արտահայտելուց:

6. Ինքնուրույնության ձեռքբերում
Ձեր փոքրիկը կսովորի ինքնուրույն հավաքել իր իրերը, կազմակերպել իր սեղանը և հոգ տանել սեփական հիգիենայի մասին:

7. Շփում և նոր ընկերների ձեռքբերում:

Մենք կօգնենք երեխային հեշտությամբ մտնել խաղի մեջ, ծանոթանալ հասակակիցների հետ և կառուցել ամուր ընկերություն:

**8. Վեճերի հարթում և բաղաձայնություն**

Երեխան կսովորի լսել դիմացինին, կիսվել խաղալիքներով և վեճերը լուծել խոսքի, այլ ոչ թե ագրեսիայի միջոցով:

**9. Էմոցիոնալ հավասարակշռություն:**

Մենք կսովորեցնենք պարզ հնարքներ, որոնք կօգնեն երեխային կառավարել բարկությունը, հուզմունքը և լինել ավելի ինքնավստահ:

**10. Ազնվության և պատասխանատվության՝ մնայուն արժեքների ձևաքերում**

Երեխան կհասկանա իր արարքների հետևանքները, կսովորի ընդունել սխալները և հարգանքով վերաբերվել թե՛ մեծերին, թե՛ հասակակիցներին:

**11. Նախանձի հաղթահարումը և ինքնավստահության ձևավորումը:**

Մենք կօգնենք երեխային տեսնել իր սեփական տաղանդները, որպեսզի նա չհամեմատվի ուրիշների հետ և սովորի անկեղծ ուրախանալ ընկերների հաջողություններով:

Ամառային դպրոցի դասերը տեղի կունենան GO Կենտրոնի հարմարավետ և ապահով տարածքում, բոլոր միջոցառումները վերահսկվում են GO անձնակազմի, փորձառու հայ և անգլիախոս մանկավարժների կողմից: